

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ծրագրի անվանումը <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների համար ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի մշակում>>

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Մշակել նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների համար ուսումնական ձեռնարկներ և ուսումնամեթոդական նյութեր, որոնք իրենց բովանդակությամբ և կառուցվածքով պետք է համապատասխանեն կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների հիման վրա կազմված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման նպատակներին:

2. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ինչպես կրթության այլ ոլորտներում, այնպես էլ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում /ՄԿՈՒ ոլորտ/ ուսումնական գործընթացի նորմալ իրականացման հիմնական գրավականներից մեկը ուսումնամեթոդական գրականության՝ առաջին հերթին ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի առկայությունն է: Գաղտնիք չէ, որ Հայաստանի ՄԿՈՒ համակարգում մինչև 2010 թվականը հիմնականում օգտագործվում էր ռուսական մասնագիտական գրականությունը: Շատ քիչ մասնագիտությունների համար էր կիրառվում Հայաստանում մշակված մասնագիտական գրականություն: Հայերեն լեզվով հրատարակված մասնագիտական գրականության մի մեծ մասն էլ պարզապես թարգմանված էր այլ լեզուներից: Նման գրականության հիմնական թերությունը կայանում է նրանում, որ դրանցում հաշվի առնված չի լինում Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջները, գործող նորմաներն ու ստանդարտները: Արդյունքում ստացվում է, որ ուսանողները իրենց ձեռքի տակ ունենում են գրականություն, որով մանրամասն ուսումնասիրում են տեսություններ ու հիմունքներ, սակայն մասնագիտական որոշակի որակներ ձեռք բերելու առումով ունենում են խնդիրներ: Հաջորդ կարևոր բացը այն է, որ դրսից բերված ուսումնական գրականությունը բավարար քանակությամբ հնարավոր չի լինում ձեռք բերել և ուսումնական հաստատություններում միշտ էլ այս պակասը զգացվում է: Իրավիճակն ավելի ծանր է ուսումնամեթոդական գրականության առումով: Կարելի է ասել, որ նման բնույթի գրականություն ընդհանրապես չկա: Որոշակի առումով այս բացը լրացնում է <<Մասնագիտական կրթություն և ուսուցում>> ամսագիրը, սակայն այն հրատարակվում է տարեկան ընդամենը 2 անգամ և հնարավոր չէ բազմաթիվ հարցեր նրանում ներկայացնել: Այդ պատճառով էլ Հայաստանի ՄԿՈՒ համակարգում Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող բարեփոխումների շրջանակներում լուրջ ուշադրություն է դարձվում մասնագիտական ուսումնական և ուսումնամեթոդական գրականության ստեղծմանը:

Մասնագիտական գրականության հետ կապված հաջորդ խնդիրը դրա որակն է: Ինչպես հայտնի է ուսումնառության արդյունքներին միտված պետական կրթական չափորոշիչների ներդրումը նոր պահանջներ է ներկայացնում նաև ուսումնական գործընթացի կազմակերպմանը ուրեմն և՛ ուսումնական գրականությանը: Մասնագիտական ուսումնական գրականության մեծ մասի

բովանդակությունը ուղղված է միայն ներդրումներին, այսինքն ինչ պետք է սովորեցնել տվյալ որակավորմամբ ապագա մասնագետին: Այստեղ բաց է մնում մասնագիտական գիտելիքները որոշակի մասնագիտական խնդիրների լուծման համար կիրառելուն: Նոր մշակվող ձեռնարկները պետք է ապահովեն նաև այս բաղադրիչը: Դրա համար նրանցում բավարար տեղ պետք է հատկացվի ուսանողների ինքնուրույն աշխատանքի առաջադրանքներին, ինքնաստուգման նպատակով կիրառվող առաջադրանքներին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական ձեռնարկը մշակվում է որպես տվյալ մասնագիտության որոշակի մասնագիտական մոդուլների ուսուցման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ամբողջություն: Այն դեպքում, երբ մշակվելու է որոշակի մասնագիտական առարկայի ձեռնարկ, ապա նրա բովանդակությունը պետք է ապահովի տվյալ առարկայի ուսուցման ծրագրային նյութը:

Ձեռնարկը պետք է ունենա հետևյալ բաղադրիչները

- տիտղոսաթերթ
- ներածություն
- համառոտագրություն
- ձեռնարկից օգտվելու վերաբերյալ բացատրություն
- ներառված նյութը ըստ բաժինների, գլուխների, թեմաների և պարագրաֆների
- օգտագործված հիմնական գրականության ցանկը
- բովանդակություն

Համառոտագրության մեջ պարզաբանվում է, թե մասնագիտական որ մոդուլի /մոդուլների/ համար է առաջարկվում ձեռնարկը և ինչպիսի հիմնական խնդիրներ է հետապնդում այն: Առարկայի համար առաջարկվող ձեռնարկի համառոտագրության մեջ բացահայտվում է տվյալ մասնագիտական առարկայի հետ կապված հիմնական հարցերի նշանակվածությունը:

Ձեռնարկը պետք է համապատասխանի մոդուլային ծրագրի կամ առարկայական ծրագրի կառուցվածքին ու հարցերի հաջորդականությանը:

Ելնելով ուսումնառության շահերից անհրաժեշտ է ձեռնարկում գործնական իրավիճակները ներկայացնել տեղեկությունների շարունակական զարգացման սկզբունքով՝ ընդունելով, որ դրանք որևէ պայմանական կազմակերպության կամ իրավիճակի մասին են:

Ձեռնարկներում պարտադիր պետք է կիրառված լինեն Հայաստանի Հանրապետությունում գործող համապատասխան նորմատիվները, բոլոր պահանջները պետք է համապատասխանեն ՀՀ գործող օրենսդրությանը և ստանդարտներին:

Ձեռնարկներում համապատասխան տեղ պետք է հատկացվի նկարներին, սխեմաներին, դիագրամներին այլ ցուցադրական բաղադրիչների: Հնարավորության դեպքում ցուցադրական նյութերը կարող է ներկայացվել առանձին սկավառակով, որը հնարավորություն է տալու ավելի ծավալուն ցուցադրական տեղեկատվություն ապահովել: Ձեռնարկներում առանձին նորմատիվ տեղեկությունները կարող է ներկայացվել հավելվածների տեսքով:

Ընդհանուր առմամբ ձեռնարկը պետք է իր բովանդակությամբ համապատասխանի առաջադրանքով հանձնարարված մոդուլների ծրագրերի պահանջներին: Ձեռնարկներում ըստ թեմաների պետք է առաջադրված լինեն ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար գործնական առաջադրանքներ, ինքնաստուգման հարցեր: Առավելագույն չափով պետք է

ապահովվի գործնական առաջադրանքների շարունակականությունը, որպեսզի մեկ գործնական առաջադրանքի արդյունքները կիրառվեն մյուս գործնական աշխատանքի համար:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

Մշակված ձեռնարկները և ուսումնամեթոդական նյութերը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով, 2 սկավառակով: Աշխատանքը կատարվում է A4 չափսի թղթի ձևաչափով, 11 տառաչափով, շարվածքը GHEA Grapalat տառաձևով, 1,5 միջտողային բացվածքով: Բաժինների և թեմաների վերնագրերը գրվում է մեծատառերով, պարագրաֆների վերնագրերը՝ փոքրատառով: Որևէ էջի վրա նկարները, սխեմաները կամ դիագրամները չպետք է գերազանցեն էջի կեսը: Գունավոր պատկերները կամ տեսանյութերը ներկայացնել առանձին սկավառակով: Ուսումնական ձեռնարկների ծավալը պետք է լինի 170-200 էջ, ուսումնամեթոդական մշակումների՝ 120-160 էջ: